

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵԲ-ԲՄԱՇՁԲ-18/48-1 >>**

ք. Երևան

«05» ապրիլի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթոյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍՄԱԼԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ավանեսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի թվով յոթ բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ հուլիսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **50678391.0 (հիսուն միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ, որից 8446399.0 (ութե միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր իննսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂՁՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում էրևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108



Գ. Զթոյան

Կապալառու

«ՍՄԱԼԱ» ՍՊԸ
Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 քն. 20
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500801319100
ՀՎՀՀ 00848343



Ա. Ավանեսյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մազմանյան փ. 5 շենքի բակային տարածքի հիմնանորոգում

NN	Քիմնորոգումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
						Հազ. դրամ
1	2	3	4	5		
<u>Քանդման աշխատանքներ</u>						
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /2200մ ² /	տն	3.30	0.823	2.7159
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	3.30	1.748	5.7684
3	E27-36	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/, հանձնում պատվիրատուին	զմ	317.20	0.614	194.7608
4	E27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ	32.40	0.614	19.8936
5	E46-132 կիր.	Բազալտե սալերի քանդում	մ ²	2.80	2.831	7.9268
6	E9-207 K=0.7	Ջրաչափական հորի մետաղական դռնակի ապամոնտաժում	տ	0.03	40.399	1.21197
7	C310-2 տ.մ.կ 29	Նստարանների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	5	1.064	5.32
8	C310-2 տ.մ.կ 29	Խաղասարքերի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	4	1.064	4.256
9	C310-1 տ.մ.կ 29	Մետաղական զրուցատաղավարի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	1	4.331	4.331

10	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով	մ ³	40.30		2.674	107.7622
11	P9-26 կիր.	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	զմ	17.30		0.327	5.6571
12	E22-64 K=0.6	Ոռոգման մետաղական խողովակների ապամոնտաժում	զմ	44.3		0.182	8.0626
13	E48-253կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	30		0.042	1.26
14	E1-961	III կարգի բնահողի կտրում ձեռքով /խաղահրապարակներում, անցուղիներում/	մ ³	54.11		1.534	83.00474
15	E1-969 E1-1184	Բնահողի ետլիցք ձեռքով կողալիցքի մշակված բնահողից տոփանելով	մ ³	54.11		0.938	50.75518
16	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	68.44		2.306	157.82264
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>					
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u>					
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ ³	2.05		5.729	11.74445
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	117.40		3.948	463.4952
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u>					
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	2.585		5.729	14.809465
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	զմ	344.70		2.876	991.3572
		<u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u>					
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	22.385		5.721	128.064585
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ. չոր ց/ա շաղախով	մ ³	17.908		10.914	195.447912
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ ²	447.70		3.475	1555.7575
		<u>Ցայտադրուրի պատրաստման, տեղադրման աշխատանքներ</u>					

1	E6-20	Ցայտադրյուրի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	0.03	29.39	0.8817
2	E17-91 շուկա	Ցայտադրյուրի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտ քարից	հատ	1	89.802	89.802
3	շուկա	Ամրան Φ14A500c	տ	0.00136	273.25	0.37162
4	շուկա	Պող. քիթեղ 200x200x2մմ	մ ²	0.04	5.708	0.22832
5	շուկա	Ցինկապատ թասակ Φ200մմ, h=100մմ	հատ	1	6.388	6.388
6	շուկա	Ցայտիչի տեղադրում Φ15մմ	հատ	1	4.392	4.392
7	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.015	371.503	5.572545
8	շուկա	Ռետին	զմ	3.0	0.319	0.957
9	շուկա	Ծխնի	հատ	2	0.24	0.48
10	շուկա	Փական	հատ	1	1.198	1.198
11	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	մ ²	3.00	0.545	1.635
12	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	զմ	21.00	0.907	19.047
13	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու քրի)	զմ	57.0	0.328	18.696
14	E22-312	Պոլիէթիլեն (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0.0570	45.28	2.58096
Այլ աշխատանքներ						
1	E15-77	Ցայտադրյուրի հարթակի երեսպատում բազալտե սալերով	մ ²	3.40	11.041	37.5394
2	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	զմ	30.8	5.492	169.1536
3	Գնահաշվարկ N2	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	15	7.732	115.98
4	Գնահաշվարկ N3	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	12	35.041	420.492

5	Գնահաշվարկ N4	Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1		335.5	335.5
6	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ ³	9.34		1.823	17.02682
7	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2		66.166	132.332
8	Գնահաշվարկ N6	Նոր մանկական խաղասարքերի կոմպլեկտ «ճոճանակ և տղարան»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1		145.337	145.337
9	Գնահաշվարկ N7	Նոր մանկական խաղասարք «Հորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2		62.601	125.202
10	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ ²	155.4		0.576	89.5104
11	E27-169	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ ²	155.4		2.047	318.1038
12	E15-262	Շինությունների ետնամասերի մասնակի սվաղում ց/ա հարթաշերտով, 30մմ հաստ.	մ ²	37.0		1.209	44.733
14	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ ³	89.56		0.33	29.5548
15	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	134.340		4.642	623.60628
16	E48-168E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ	մ ²	895.6		1.226	1098.0056
17	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ ²	895.6		0.126	112.8456
18	E48-214	Սերմի ցանում 1մ ² - 35գր	մ ²	895.6		0.173	154.9388
Նախահաշիվ N1-2 էլեկտրատեխնիկական մաս							
1	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով	մ ³	2.80		2.674	7.4872
2	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ ³	31.52		2.705	85.2616
3	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	92.70		0.171	15.8517
4	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 3.25+3.25մ ³ /	մ ³	6.50		1.411	9.1715

5	8-417-7	Խողովակ վինիլալաստե Ø50մմ	զմ	92.70		0.386	35.7822
6	E8-146-1	ABBԴ 4x16մմ ² հատվածքով մալուխի անցկացում /վերգետնյա/	զմ	7.60		0.989	7.5164
7	E8-145-1	ՈՒՑ 2x4մմ ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	զմ	92.70		0.393	36.4311
8	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	զմ	92.70		0.176	16.3152
9	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	24.10		0.784	18.8944
10	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ ²	3.5		0.554	1.939
11	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ ²	3.5		2.695	9.4325
12	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	12.60		2.306	29.0556
13	Գնահաշվարկ N8	Լուսավորության դեկորատիվ հենասյուների տեղադրում	հատ	6		78.516	471.096
Նախահաշիվ N1-3 Ոռոգում							
<u>Տեխնոլոգիական աշխատանքներ</u>							
1	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1		2.096	2.096
2	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Ø57x3.0մմ, հիդրավլիկ փորձարկումով	զմ	69.00		1.356	93.564
3	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Ø40x2.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	զմ	112.0		0.94	105.28
4	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 304 6Ճք Ø50մմ Py1.0ՍՊա	հատ	2		10.443	20.886
5	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում Ø50	հատ	4		2.345	9.38
6	Գնահաշվարկ N9	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	11		5.986	65.846
7	Գնահաշվարկ N10	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	2		4.102	8.204
8	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.003		1606.745	4.820235

9	շուկա	Ջեյուս M16, L=60մմ	կգ	2.352	0.838	1.970976
10	շուկա	Պնդոլակ M16	կգ	0.672	0.8316	0.5588352
11	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ ²	27.5	0.773	21.2575
12	E22-335	Պողպատե խողովակների լվացում Ø50մմ	զմ	181.0	0.021	3.801
<u>Շինարարական աշխատանքներ</u>						
1	E1-961	Բնահողի մշակում ձեռքով	մ ³	3.20	1.534	4.9088
2	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	3.20	0.784	2.5088
		Ընդամենը /հազ. դր./				9232.593
		Շահույթ 11%				1846.519
		Ընդամենը /հազ. դր./				11079.112

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Բաշինջաղյան 194,196 շենքերի բակային տարածքի հիմնանորոգում

NN	Քիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Փակոց	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
						հազ. դրամ
1	2	3	4	5		
		Քանդման աշխատանքներ				
1	27-36	Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	զմ	51.600	0.615	31.734
2	P9-26	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում H=1.5մ	զմ	53.300	0.328	17.482
3	P25-18 K=0.6 K=0.7	Նստարանների ապամոնտաժում 2հատ	տն	0.100	30.137	3.014

4	7-1 q=0.6 q=0.7	Ցայտադրյուրի ապամոնտաժում	հատ	1.000		1.866	1.866
5	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում / (5մ2)	մ ³	0.200		2.67	0.534
6	E27-31	Խճի շերտի քանդում	մ ³	0.250		0.339	0.085
7	C310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	8.221		2.299	18.901
		Բարեկարգման աշխատանքներ					
8	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	1.920		8.526	16.370
9	E6-92	Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	12.300		44.096	542.381
10	Շուկա	Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.470		242.782	114.108
11	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	2.035		8.526	17.350
12	27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	գմ	101.75		3.924	399.267
13	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	0.570		8.526	4.860
14	27-79	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /այդ թվում զրուցատաղավարի/	գմ	57.000		3.528	201.096
15	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում բետոնե գեղարվեստական սալիկների տակ	մ ³	7.815		8.526	66.631
16	E6-1	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	մ ³	3.647		21.331	77.794
17	E27-19 կիրառ	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ ³	2.605		7.923	20.639
18	27-175	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /այդ թվում զրուցատաղավարի/	մ ²	52.10		3.554	185.163
19	E1-1592	Բուսահողի բարձում ա/հնքնաթափերի վրա	մ ³	26.850		1.517	40.731
20	C310-35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	32.220		3.865	124.530
21	E48-168	Բուսահողի փռում ձեռքով	մ ²	179.00		0.256	45.824
22	E48-214	Միզամարզերի տեղադրում	մ ²	179.00		0.113	20.227
23	11-3	Կապույտ ավազի փռում	մ ³	1.215		4.882	5.932
24	Շուկա	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	7.000		28.539	199.773
25	Շուկա	Արղամանների տեղադրում ամրացումով	հատ	5.000		14.27	71.350
26	P11-105	Պատերի ց/ավազե սվաղ	մ ²	43.900		1.489	65.367
27	E27-173 E27-174	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ ²	5.00		0.564	2.820

28	E27-169 E27-172	Մանրահատիկ աֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ ²	5.00		
		Ռոտզման ցանց			2.695	13.475
29	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	6.000	1.538	9.228
30	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	6.000	0.643	3.858
31	E22-64	Պողպատե խողովակի տեղադրում Փ51x3մմ փորձարկումով	գմ	195.000	1.434	279.630
32	E22-64	Պողպատե խողովակի տեղադրում Փ25x3մմ փորձարկումով	գմ	67.000	0.843	56.481
33	E22-312 կիրառ	Խողովակաշարի լվացում վարակազերծումով	կմ	0.262	45.895	12.024
34	E16-185	Ռոտզման ծորակների տեղադրում Փ25մմ	հատ	18.000	3.003	54.054
35	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում	տ	0.024	935.533	22.453
36	22-383	Ռոտզման դատարկման ծորակների տեղադրում Փ50մմ	հատ	3.000	20.247	60.741
37	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում Փ50մմ	հատ	6.000	2.655	15.930
38	22-383 կիրառ	Փականների տեղադրում Փ25մմ	հատ	3.000	2.829	8.487
39	15-614	Խողովակների 2 շերտ յուղաներկում	մ ²	45.700	0.774	35.372
		Տաղավարների պատրաստում և տեղադրում /4x2.5/մ 1հատ				
40	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	0.350	2.867	1.003
41	C310-13 տ.մ.կ29	Բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.648	2.299	1.489
42	E6-5	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0.350	35.964	12.587
43	Շուկա	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.080	242.782	19.423
44	P25-18	Զրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 120x120x3.5մմ մետ խողովակներից 80x80x2մմ, կավարամած 30x30x1.5մմ, բազրիքաճաղեր 30x30x1.5մմ/	տն	0.345	50.548	17.439
45	Շուկա	120x120x3.5մմ մետ խողովակների արժեքը	գմ	10.680	2.928	31.271
46	Շուկա	80x80x2մմ մետ խողովակների արժեքը	գմ	22.700	1.626	36.910
47	Շուկա	30x30x1.5մմ մետ խողովակների արժեքը	գմ	76.330	0.495	37.783
48	9-24	Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ КП-21-0.5մմ	մ ²	14.000	3.674	51.436
49	Շուկա	Մետաղական նստարան փայտե նստատեղերով	հատ	2.000	28.539	57.078
50	Շուկա	Մետաղական սեղան /գրուցատաղավար/	հատ	1.000	19.819	19.819
51	Շուկա	Մետաղական պահարան /գրուցատաղավար/	հատ	1.000	23.783	23.783

52	15-614	Զրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ ²	35.000		0.774	27.090
		Մետաղական բազրիք 145գմ					
53	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	4.200		2.867	12.041
54	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	1.095		0.643	0.704
55	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	5.900		2.299	13.563
56	11-6	Խճի շերտի պատրաստում	մ ³	1.449		8.526	12.354
57	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	1.656		33.912	56.158
58	E7-735	40x2մմ, 20x20x2մմ մետաղական խողովակներից բազրիքների տեղադրում	գմ	145.000		1.678	243.310
59	Շուկա	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	931.50		0.358	333.477
60	Շուկա	40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	113.850		0.61	69.449
61	33-82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1.214		21.284	25.844
		Էլեկտրալուսավորություն					
62	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	1.800		2.867	5.161
63	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	0.840		0.643	0.540
64	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.776		2.299	4.083
65	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0.960		33.912	32.556
66	E6-82	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.031		63.336	1.935
67	Շուկա	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2.400		3.942	9.461
68	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	3.000		9.637	28.911
69	Շուկա	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	20.400		3.000	61.200
70	Շուկա	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	3.000		0.693	2.079
71	33-82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.204		21.284	4.336
72	8-594-1	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	3		17.787	53.361
73	8-150-1	ABBԳ 4x16մմ ² մալուխի անցկացում օդով ճոպանով	գմ	70.000		0.841	58.870
74	8-148-1	ABBԳ 2x2.5մմ ² մալուխի անցկացում	գմ	15.000		0.165	2.475
75	Շուկա	Ճոպանի արժեքը	գմ	70.000		0.185	12.950
76	8-52-1	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	3.000		0.396	1.188
77	8-52-1	Մեկուսիչ Ընկույզ	հատ	3.000		0.555	1.665

		Ընդամենը /հազ. դր./				4252.345
		Սարքավորումներ				469.000
		Առանց սարքավորումների				3783.345
		ԱԱՀ 20%				850.469
		Ընդամենը /հազ. դր./				5102.814

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հալաբյան 9/1 շենքի բակային տարածքի հիմնանորոգում

NN	Քիմնակիրումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավրոց	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
						հազ. դրամ
1	2	3	4	5		
		Քանդման աշխատանքներ				
1	P9-26	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում H=2մ	զմ	79.60000	0.32500	25.87000
2	P25-18 K=0.6 K=0.7	Նստարանների ապամոնտաժում 2հատ	տն	0.10000	29.86800	2.98680
3	7-1 q=0.6 q=0.7	Ցայտադրյուրի ապամոնտաժում	հատ	1.00000	1.84900	1.84900
4	P25-18 K=0.6 K=0.7	Տաղավարների ապամոնտաժում 1հատ	տն	0.25000	29.86800	7.46700
5	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում / (9մ2)	մ ³	0.27000	2.64700	0.71469
6	E27-31	Խճի շերտի քանդում	մ ³	0.45000	0.33600	0.15120
7	E46-83	Հենապատի քանդում	մ ³	2.60000	12.77000	33.20200
8	C310- 13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	8.46680	2.27800	19.28737
9	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	1.04000	8.45000	8.78800
10	E6-92	Միաձույլ է/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	6.70000	43.70300	292.81010
11	Շուկա	Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.29500	240.62100	70.98320
12	11-6	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	2.44700	8.45000	20.67715
13	27-79	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /այդ թվում գրուցատաղավարի/	զմ	244.70000	3.49600	855.47120
14	11-6	Խճի նախապատրաստական շերտի	մ ³	21.94500	8.45000	185.43525

		պատրաստում բետոնե գեղարվեստական սալիկների տակ				
15	E6-1	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	մ ³	10.24100	21.14100	216.50498
16	E27-19 կիրառ	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ ³	7.31500	7.85200	57.43738
17	27-175	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /այդ թվում գրուցատաղավարի/	մ ²	146.30000	3.52200	515.26860
18	E1-1592	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ ³	49.95000	1.50300	75.07485
19	C310-35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	59.94000	3.83000	229.57020
20	E48-168	Բուսահողի փոում ձեռքով	մ ²	333.00000	0.25400	84.58200
21	E48-214	Միզամարզերի տեղադրում	մ ²	333.00000	0.11200	37.29600
22	11-3	Կապույտ ավազի փոում	մ ³	2.45000	4.83800	11.85310
23	Շուկա	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	13.00000	28.28500	367.70500
24	Շուկա	Արդամանների տեղադրում ամրացումով	հատ	10.00000	14.14300	141.43000
25	P11-105	Պատերի ց/ավազե սվաղ	մ ²	133.50000	1.47600	197.04600
26	E8-163	Պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 20սմ հաստությամբ 25.6մ2	մ ³	5.12000	14.93800	76.48256
27	E27-173 E27-174	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ ²	17.00000	0.55900	9.50300
28	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ ²	17.00000	2.67100	45.40700
		Տաղավարների պատրաստում և տեղադրում /4x2.5/մ 1հատ				
29	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	0.35000	2.84200	0.99470
30	C310-13 տ.մ.կ29	Բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.64750	2.27800	1.47501
31	E6-5	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0.35000	35.64400	12.47540
32	Շուկա	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.08000	240.62100	19.24968
33	P25-18	Ջրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 120x120x3.5սմ մետ խողովակներից 80x80x2սմ, կավարամած 30x30x1.5սմ, բազրիքաճաղեր 30x30x1.5սմ/	տն	0.34500	50.09800	17.28381
34	Շուկա	120x120x3.5սմ մետ խողովակների արժեքը	զմ	10.68000	2.90200	30.99336
35	Շուկա	80x80x2սմ մետ խողովակների արժեքը	զմ	22.70000	1.61100	36.56970
36	Շուկա	30x30x1.5սմ մետ խողովակների արժեքը	զմ	76.33000	0.49000	37.40170
37	9-24	Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5սմ հաստությամբ	մ ²	14.00000	3.64200	50.98800

		КП-21-0.5մմ				
38	Շուկա	Մետաղական նստարան փայտե նստատեղերով	հատ	2.00000	28.28500	56.57000
39	Շուկա	Մետաղական սեղան /գրուցատաղավար/	հատ	1.00000	19.64300	19.64300
40	Շուկա	Մետաղական պահարան /գրուցատաղավար/	հատ	1.00000	23.57100	23.57100
41	15-614	Զրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ ²	35.00000	0.76700	26.84500
		Ոռոգման ցանց				
42	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	4.80000	1.52500	7.32000
43	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	4.80000	0.63800	3.06240
44	E22-64	Պողպատե խողովակի տեղադրում Փ51x3մմ փորձարկումով	գմ	115.00000	1.42100	163.41500
45	E22-64	Պողպատե խողովակի տեղադրում Փ25x3մմ փորձարկումով	գմ	30.00000	0.83600	25.08000
46	E22-312 կիրառ	Խողովակաշարի լվացում վարակազերծումով	կմ	0.14500	45.48700	6.59562
47	E16-185	Ոռոգման ծորակների տեղադրում Փ25մմ	հատ	14.00000	2.97600	41.66400
48	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում	տ	0.01950	927.20600	18.08052
49	22-383	Ոռոգման դատարկման ծորակների տեղադրում Փ50մմ	հատ	3.00000	20.06700	60.20100
50	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում Փ50մմ	հատ	6.00000	2.63100	15.78600
51	22-383 կիրառ	Փականների տեղադրում Փ25մմ	հատ	3.00000	2.80300	8.40900
52	15-614	Խողովակների 2 շերտ յուղաներկում	մ ²	26.00000	0.76700	19.94200
		Էլեկտրալուսավորություն				
53	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	1.80000	2.84200	5.11560
54	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	0.84000	0.63800	0.53592
55	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.77600	2.27800	4.04573
56	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0.96000	33.61000	32.26560
57	E6-82	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.03055	62.72300	1.91631
58	Շուկա	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2.40000	3.93600	9.44640
59	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	3.00000	9.66300	28.98900
60	Շուկա	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	20.40000	2.97800	60.75120
61	Շուկա	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	3.00000	0.68400	2.05200
62	33-82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.20372	21.09400	4.29723
63	8-594-1	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	3.00000	17.62900	52.88700

64	8-150-1	ABBГ 4x16մմ2 մալուխի անցկացում օղով ճոպանով	զմ	60.00000	0.83400	50.04000
65	8-148-1	ABBГ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	զմ	15.00000	0.16400	2.46000
